ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 28-Ն

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ,,Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն,, հիմնադրամի և Բերդի քաղաքապետարանի միջև 01.06.2014 թ. ագրոբիզնես-խորհրդատվության նպատակով կնքված FVSC/5 պայմանագիրը

**համայնքի ավագանին որոշում է**

Բերդ համայնքի 2014 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1)համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 6 մլն 806 հազար դրամով և հաստատել`

բյուջեի եկամտային մասը 211427.0 հազար դրամ,

բյուջեի ծախսային մասը 211427.0 հազար դրամ:

2) բյուջեի եկամտային մասում ,,Պաշտոնական տրանսֆերտներ միջազգային կազմակերպություններից,, տողը սահմանել 6806.0 հազար դրամ` համաձայն N 1 հավելվածի, ծախսային մասում` ,,Գյուղատնտեսություն,, տողն ավելացնել 6806.0 հազար դրամով` համաձայն N 2 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2014 թվականի
օգոստոսի 20-ի N 28-Ն որոշման

## 2014 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | Գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5500.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 14000.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000.00 |
| 5 | Այլ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 6500.90 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 8000.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 58500.90 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 117969.30 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.50 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 3301.90 |
| 12 | Ընթացիկ սուբվենցիա | 11212.90 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 136842.60 |
| 13 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ | 6806.00 |
| 14 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 9277.50 |
| 15 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 6960.30 |
| 16 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 2317.20 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 211427.00 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2014 թվականի
օգոստոսի 20-ի N 28-Ն որոշման

**Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման**
**2014թ.**

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Նախատեսված գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 43528.0 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 41235.0 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 30207.5 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 18782.0 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 53910.0 |
| 6 | ԱՌՈՑ ԾԱԽՍԵՐ | 500.0 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 3000.0 |
| 8 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 1500.0 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.5 |
| 10 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 2000.0 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3100.0 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 9306.0 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 211427.00 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 29-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդ համայնքի ավագանու 2014 թվականի
օգոստոսի 20-ի N 29-Ա որոշման

## Համայնքի 2014 թվականի առաջին կիսամյակի եկամուտների կատարման մասին

/հազար դրամ/

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ | Տարեկան պլան /հազ.դրամ/ | 2014թ. առաջին կիսամյակ | | |
|---|---|---|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | Պլան | Փաստացի | Կատարման % |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5500.00 | 3000.00 | 2714.60 | 90.49 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 14000.00 | 6000.00 | 7241.10 | 120.69 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 | 1700.00 | 1765.70 | 103.86 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000.00 | 2200.00 | 1944.10 | 88.37 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 6500.90 | 5800.00 | 5681.20 | 97.95 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 8000.00 | 4000.00 | 3854.90 | 96.37 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 | 5200.00 | 5185.00 | 99.71 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 | 2868.00 | 2867.90 | 100.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 58500.90 | 30768.00 | 31254.50 | 101.6 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | | | | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 117969.30 | 58984.80 | 58984.80 | 100.00 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.50 | 1070.20 | 1046.40 | 97.78 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 3301.90 | 861.80 | 861.80 | 100.00 |
| 12 | ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 11212.90 | 5606.30 | 5606.30 | 100.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 136842.60 | 66523.10 | 66499.30 | 99.96 |
| 13 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 9277.50 | | | |
| 14 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 6960.30 | | | |
| 15 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 2317.20 | | | |
| | Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը | 204621.00 | 97291.10 | 97753.80 | 100.48 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2

Բերդ համայնքի ավագանու 2014 թվականի
օգոստոսի 20-ի N 29-Ա որոշման

## 2014 թ.առաջին կիսամյակում համայնքի տեղական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

/հազար դրամ/

| Հ/h | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Տարեկան նախատեսված ծախս /հազ. դրամ/ | 2014թ. առաջին կիսամյակ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Պլան | Փաստացի | Կատարման % |
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 43528.0 | 26908 | 19063.7 | 70.85 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 41235.0 | 20650 | 14324.5 | 69.37 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 30207.5 | 18670.0 | 12448.3 | 66.68 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, Արվեստի դպրոց | 18782.0 | 9410.0 | 8961.8 | 95.24 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ,ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅ. | 48910.0 | 25376.0 | 24692.0 | 97.3 |
| 6 | ԱՂԲԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ | 5000.0 | 5000.0 | 0.0 | 0.0 |
| 7 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 500.0 | 365.0 | 365.0 | 100.0 |
| 8 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 3000.0 | | | |
| 9 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 1500.0 | | | |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.5 | 1284.2 | 1223.1 | 95.24 |
| 11 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 2000.0 | 1520.0 | 1278.6 | 84.1 |
| 12 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3100.0 | 2000.0 | 966.7 | 48.3 |
| 13 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 2500.0 | 2273.0 | 1318.0 | 58.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 204621.0 | 113456.2 | 84641.7 | 74.6 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 30-Ա

## ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՓԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նվազագույն ամսական աշխատավարձի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին 12 դեկտեմբերի 2013 թվականի Հայաստանի Հանրապետության օրենքով

**համայնքի ավագանին որոշում է**

Քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքային բյուջետային կազմակերպությունների հաստիքացուցակներում կատարել նվազագույն աշխատավարձի չափի փոփոխություն և հաստատել՝

1)քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2)մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3)արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի,

4)գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 4 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 1*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2014 թվականի օգոստոսի 20-ի N 30-Ա որոշման*

## Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

**Աշխատակիցների թվաքանակը՝ 23**

**Բերդի քաղաքապետարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 231,000.00 | 231,000.00 |
| | Հայեցողական պաշտոններ | | | - |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 114,000.00 | 114,000.00 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 85,150.00 | 85,150.00 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 73,585.00 | 73,585.00 |
| | Համայնքային ծառայողներ | | | - |
| 5 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 111,700.00 | 111,700.00 |
| | Ֆինանսատնտեսագիտական բաժին | | | - |
| 6 | Բաժնի պետ 2.1-2 | 1 | 102,500.00 | 102,500.00 |
| 7 | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 8 | Առաջին կարգի մասնագետ 3.2-9 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 9 | Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 10 | Առաջին կարգի մասնագետ 3.2-7 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| | Ներքին աուդիտի բաժին | | | - |
| 11 | Բաժնի պետ 2.1-3 | 1 | 102,500.00 | 102,500.00 |
| | ՔԿԱԳ Բերդի ՏԲ | | | - |
| 12 | Բաժնի պետ 1.3-1 | 1 | 256,625.00 | 256,625.00 |
| 13 | Առաջին կարգի մասնագետ 3.2-10 | 1 | 133,603.00 | 133,603.00 |
| | Աշխատակազմ | | | - |
| 14 | Գլխավոր մասնագետ 2.3-2 | 1 | 96,680.00 | 96,680.00 |
| 15 | Գլխավոր մասնագետ 2.3-3 | 1 | 96,680.00 | 96,680.00 |
| 16 | Առաջատար մասնագետ 3.1-7 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 17 | Առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| | Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 18 | Առաջին կարգի մասնագետ 3.2-3 | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| | | | | |
| | Տեխսպասարկման անձնակազմ | | | |
| 21 | Վարորդ | 1 | 73,585.00 | 73,585.00 |
| 22 | Հավաքարար | 2 | 33,070.00 | 66,140.00 |
| 20 | Հանդապահ | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| | **Ընդամենը** | **23** | **2,105,938** | **2,139,008** |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 2*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2014 թվականի օգոստոսի 20-ի N 30-Ա որոշման*

## Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10.5

2. Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 3 | 5 | 4 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 75,000.00 | 75,000.00 |
| 2 | Մարզիչ | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 3 | Մարզիչ | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 4 | Մարզիչ | 1 | 66,140.00 | 59,524.00 |
| 5 | Մարզիչ | 1 | 66,140.00 | 59,524.00 |
| 6 | Մարզիչ | 0.5 | 66,140.00 | 33,070.00 |
| 7 | Մարզիչ | 0.5 | 66,140.00 | 33,070.00 |
| 8 | Մարզիչ | 0.5 | 66,140.00 | 33,070.00 |
| 9 | Բուժքույր | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 10 | Տնտեսվար | 1 | 66,140.00 | 66,140.00 |
| 11 | Տեխնիկական աշխատող | 2 | 66,140.00 | 132,280.00 |
| | **Ընդամենը** | **10.50** | **736,400.00** | **690,098.00** |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 3*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*
*2014 թվականի  օգոստոսի 20-ի  N  30-Ա  որոշման*

## Բերդի արվեստի դպրոցի  աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1 Աշխատակիցների թվաքանակը՝ 6.5

2 Բերդի արվեստի դպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 73600 | 73600 |
| 2 | Նկարչության դասատու | 1 | 66140 | 66140 |
| 3 | Նկարչության դասատու | 1.5 | 66140 | 99210 |
| 4 | Գորգագործության դասատու | 1 | 66140 | 66140 |
| 5 | Նկարչության դասատու | 1 | 66140 | 66140 |
| 6 | Տեխն.աշխատող | 1 | 66140 | 66140 |
| | **Ընդամենը** | **6.5** | **404300** | **437370** |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 4*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2014 թվականի օգոստոսի 20-ի N 30-Ա որոշման*

## Բերդի քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը` 2
2. Բերդի քաղաքային գրադարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 73600 | 73600 |
| 2 | Գրադարանավարուհի | 1 | 66140 | 66140 |
| | **Ընդամենը** | **2** | **139740** | **139740** |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 31-Ա

## ԼԻԶԻՆԳՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի գյուղատնտեսության զարգացման խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկա: ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ-ն համայնքներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա՝ շահավետ պայմաններով: Համայնքի համար առաջնահերթություն է մի շարք գյուղատնտեսական սարքավորումների՝ ,,Բելառուս,, МТЗ-82-1 մակնիշի տրակտորի, Л-131-7 մակնիշի կուլտիվատորի, СПЧ-6 ЛТ /եգիպտացորեն, արևածաղիկ, ճակնդեղ/ մակնիշի սերմնացանի, ПТ-165 М մակնիշի հակ կապող սարքավորման ձեռք բերումը: Համայնքի ղեկավարն առաջարկում է 20% կանխավճարով, 14 միլիոն 95 հազար դրամով, 6 տարի մարման ժամկետով զնել անհրաժեշտ տեխնիկան:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը `

**համայնքի ավագանին որոշում է**

1.Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերումը համարել առաջնահերթություն և ներկայացնել լիզինգի հայտ, 20% կանխավճարով, 14 միլիոն 95 հազար դրամով, 6 տարի մարման ժամկետով, գյուղատնտեսական սարքավորումներ՝ ,,Բելառուս,, МТЗ-82-1 մակնիշի 1 տրակտոր, Л-131-7 մակնիշի 1 կուլտիվատոր, СПЧ-6 ЛТ /եգիպտացորեն, արևածաղիկ, ճակնդեղ/ մակնիշի 1 սերմնացան, ПТ-165 М մակնիշի հակ կապող սարքավորում ձեռք բերելու համար:

2.2014-2017 թ.թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար համայնքի բյուջեում նախատեսել առնվազն լիզինգի գծով, վարձավճարների չափով, ծախսային համապատասխան հոդված:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 32-Ա

## ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2007-2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Արխիվային գործի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով

**համայնքի ավագանին որոշում է**

Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերվող Բերդի քաղաքապետարանի 2007-2009 թվականների փաստաթղթերը հանձնել Հայաստանի Ազգային արխիվի Բերդի տարածքային ներկայացուցչություն:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 33-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի սեփականությունը հանդիսացող ,,Գյոդակ քար,, հանդամասում գտնվող 1 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, ծածկագիրը՝ 11-002-0257-0113, օտարել աճուրդով:

Մեկնարկային գինը սահմանել 140 000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 34-Ա

## 400 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով, որ նշված հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Տալ համաձայնություն Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերից Խորենացու 28/3 հասցեում գտնվող 400 քառակուսի մետր մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0040:

Մեկնարկային գինը սահմանել 400 000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 35-Ա

## ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով Հայաստանի Հանրապետության կառավարության 22 հունիսի 2012 թվականի N 822-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով զինծառայող Դավիթ Սամվելի Մելքումյանի ներկայացրած փաստաթղթերը

**համայնքի ավագանին որոշում է**

Զինծառայող Դավիթ Սամվելի Մելքումյանին, հաշվառված Բերդ քաղաքի Գետափնյա 10 հասցեում, հանրային ծառայությունների համարանիշը 1507840136, տրամադրել փոխադրամիջոցի՝ VOLKSWAGENVENTO 1.8 մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենայի, 8000 դրամ գույքահարկից ազատվելու արտոնություն:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 36-Ա

## ԶՈՅԱ ՍԱՄՎԵԼԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Տալ համաձայնություն՝ Զոյա Սամվելի Դարբինյանին, ծնված 1987 թ., սովորում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պատմության ֆակուլտետի 5-րդ կուրսում, Բերդի քաղաքային գրադարանի տնօրեն նշանակելու համար:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 37-Ա

## ,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ ենթակետով

**համայնքի ավագանին որոշում է**

Տալ համաձայնություն Աննա Գագիկի Մելիքյանին, ծնված 1988 թ., կրթությամբ բարձրագույն, միջազգային հարաբերությունների մագիստրոս, ,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու համար:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ
## 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 38-Ա
## ՎԱԶԳԵՆ ՂԱՎԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՂԱՎԱԼՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վազգեն Մամիկոնի Ղավալյանը ծնվել է 1930 թվականի սեպտեմբերի 30-ին Շամշադինի շրջանի Վերին Կարմիրաղբյուր գյուղում: 1952 թվականի ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, ծառայել է Ավստրիայում, Հունգարիայում տեղակայված սովետական զորամասերում, շուրջ 10 տարի՝ Սախալինում: Գերազանց ծառայության, հրետանային զորավարժություններում բարձր ցուցանիշներ արձանագրելու համար պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով և ժամանակից շուտ արժանացել փոխգնդապետ՝ զինվորական կոչման: 1972 թվականին փոխգնդապետ Ղավալյանը ծառայության է տեղափոխվում Քութայիսի, սկզբում՝ հրամանատարի տեղակալ, ապա՝ հրամանատար: 1976 թվականի վերջին զորացրվում է և աշխատանքի անցնում Երևանում, զբաղվում է մանկավարժական գործունեությամբ: 1988 թվականին սկսվեց Ղարաբաղյան շարժումը: 1991թվականին, երբ իրավիճակը խիստ սրվեց Հայաստանի Հյուսիս-արևելյան շրջաններում, փոխգնդապետ Ղավալյանը տեղափոխվեց շրջան և լծվեց հայրենիքի սահմանների պաշտպանության գործին: Ղավալյանը մեծ օգնություն է ցույց տալիս շրջանի հրետանավորներին, անձամբ մասնակցում մարտական գործողություններին: 1992 թվականին Ղավալյանը նշանակվում է շրջանի պաշտպանության պարետ: 1993 թվականին Ղավալյանին շնորհվում է հերթական զինվորական կոչումը՝գնդապետ, և նշանակվում է նորաստեղծ մոտոհրաձգային գնդի հրամանատարի տեղակալ, իսկ 1994 թվականին՝ գնդի հրամանատար: 2000 թվականին կենսաթոշակի անցնելուց հետո մինչև 2008 թվականը գնդապետ Ղավալյանը դասախոսել է Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, իր փորձն ու գիտելիքները հաղորդել երիտասարդությանը:

Գնդապետ Վազգեն Ղավալյանը մահացել է 2009 թվականի հունվարի 24-ին:

Հայրենիքը բարձր է գնահատել Ղավալյանի անձնուրաց ծառայությունները: Գնդապետ Ղավալյանն արժանացել է մի շարք կառավարական պարգևների՝Կարմիր Աստղի 2 շքանշանի, ՀՀ ԶՈՒ մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանի և 12 մեդալների:

Ներկայացնելով գնդապետ Վազգեն Ղավալյանի կենսագրությունը՝ համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանն առաջարկում է հաշվի առնել, որ Ղավալյանը մեծ ներդրում ունի բանակաշինության, զինծառայողների մարտական պատրաստության բարձրացման, երիտասարդության ռազմա-հայրենասիրական դաստիարակության, Հայաստանի Հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանության կազմակերպման գործում և առաջարկում է գնդապետ Վազգեն Ղավալյանի անվան հրապարակում տեղադրել Ղավալյանի կիսանդրին:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Շրջանի մարտական գործողությունների կազմակերպիչ և առաջին հրամանատար, գնդապետ Վազգեն Ղավալյանի կիսանդրին տեղադրել Բերդ քաղաքի իր անունը կրող հրապարակում:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան